# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2025թ. N 454-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Նորայր Ռոբերտի Բաղդասարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքային խորհրդի գործկոմի 1995 թվականի օգոստոսի 25-ի «Բնակարանը սեփականաշնորհելու մասին» N 14 որոշման 4-րդ կետում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) «ա» ենթակետում «Դմիտրիի» բառը փոխարինել «Դիմիտրի» բառով.

2) «բ» ենթակետում «Դմիտրի» բառը փոխարինել «Դիմիտրի» բառով.

3) «զ» ենթակետում «Հայկուշ» բառը փոխարինել «Հայկանուշ» բառով.

4) «ա» ենթակետը «Դիմիտրի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1957 թվականի դեկտեմբերի 23-ին» բառերով և թվերով.

5) «բ» ենթակետը «Սրապի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1925 թվականին» բառերով և թվով.

6) «գ» ենթակետը «Կարապետի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1959 թվականի նոյեմբերի 17-ին» բառերով և թվերով.

7) «դ» ենթակետը «Ռոբերտի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1981 թվականի հուլիսի 06-ին» բառերով և թվերով.

8) «ե» ենթակետը «Ռոբերտի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1985 թվականի նոյեմբերի 24-ին» բառերով և թվերով.

9) «զ» ենթակետը «Ռոբերտի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1989 թվականի ապրիլի 06-ին» բառերով և թվերով.

10) «է» ենթակետը «Ռոբերտի» բառից հետո լրացնել «, ծնված՝ 1995 թվականի մայիսի 11-ին» բառերով և թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2025թ. N 455-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 70-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 28-ի N 07/25 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.2025 թվականի համար Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ Դանիել Անդրանիկի Ավանեսյանի (ծնված՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ին) համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ սկսած 2025 թվականի սեպտեմբերի 01-ից:

2.Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝
1) ապահովել կիրառված արտոնության կատարումը.
2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2025թ. N 456-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 29 ՇԵՆՔ ԹԻՎ 33 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Հռիփսիմե Սիրեկանի Քեչեչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հռիփսիմե Սիրեկանի Քեչեչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 29 շենք թիվ 33 բնակարանի (վկայական՝ 1527410, տրված՝ 2003 թվականի հունիսի 26-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 29 շենք 33 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2025թ. N 457-Ա

ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Սիրանուշ Սաֆարյանի ներկայացուցիչ Էնզել Գուլիկյանի հայտը՝ ***որոշում եմ.***

1.Սիրանուշ Սաֆարյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական տարածք 49 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0553 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-051-0121-0004, վկայական N 04082022-07-0060) 1 (մեկ) հարկանի բնակելի տան կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար (N 45 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կցվում է):

2.Սիրանուշ Սաֆարյանին՝
1)նախագիծը ներկայացնել համաձայնեցման.
2)կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2025թ. N 458-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 418-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի սեպտեմբերի 03-ի N 01/05/08359-2025 գրությունն ու Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի քարտուղար Վարուժան Մարտիրոսյանի 2025 թվականի սեպտեմբերի 04-ի N 1037 զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 14-ի «Անահիտ Նապոլեոնի Բաշրաթյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» N 418-Ա որոշման նախաբանում «երկրորդ մասի երկրորդ կետի» բառերը փոխարինել «3-րդ մասի 2-րդ կետի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 05
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2025թ. N 459-Ա

### ԼԻԼԻԹ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Լիլիթ Ավագյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Լիլիթ Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամասի 5-րդ փողոց 37 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0474 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-051-0138-0030) կառուցված զրուցարանի և պարսպի համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն, N ԱՇԹԴ/772/7595-25 ավարտական ակտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 05
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2025թ. N 460-Ա

### ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 15-ի N 29-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 105-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Բյուրեղավան համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 09-ի յոթերորդ նստաշրջանի հերթական թիվ 09 նիստի օրակարգում ընդգրկված՝ «Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական անհամաձայնություն տրամադրելու մասին» հարցի քննարկման համար Բյուրեղավան համայնքի ավագանու Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովին նշանակել իրավասու հանձնաժողով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 05
ք. Բյուրեղավան